ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 956-Ա

«14» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 204[1]-րդ, 466-րդ, 468-րդ և 469-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի և Հարություն Հովհաննեսի Հարությունյանի միջև 24.08.2022 թվականին կնքված /սեղանամատյան 2053/ Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Նալբանդյան փողոցի թիվ 1/50 հասցեում գտնվող 0,17755հա մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիրը, 16.08.2024 թվականի համաձայնագիրը /սեղանամատյան 5895/ և Վաղարշապատ համայնքի ավագանու 09.09.2025 թվականի թիվ 109-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Երկարաձգել 24.08.2022 թվականին կնքված /սեղանամատյան 2053/ Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Նալբանդյան փողոցի թիվ 1/50 հասցեում գտնվող 0,17755հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության /կադաստրային ծածկագիր 04-002-0089-0016/ հողամասի կառուցապատման իրավունքի ժամկետը ևս 1/մեկ/ տարով՝ մինչև 2026 թվականի օգոստոսի 24-ը և կնքել վերոնշյալ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:
2. Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝ 2.1/երկուսի մեկ/ կետը փոխել՝ շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Կառուցապատման իրավունքի ժամկետը երկարաձգվում է և սահմանվում է մինչև՝ 2026 թվականի օգոստոսի 24-ը»:
3. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:
4. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ նոտարական գրասենյակում կնքելու և ստորագրելու Վաղարշապատ համայնքի և Հարություն Հովհաննեսի Հարությունյանի միջև Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիրը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 95 ԼԿ

«17» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈՅԻ»-ԻՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 110-Ն որոշումները և անհատ ձեռնարկատեր «ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈՅԻ»-ի հայտը (մուտք՝ 2025 թվականի սեպտեմբեր 12-ի N 6007).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անհատ ձեռնարկատեր «ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈՅԻ»-ին տալ 2025 թվականի սեպտեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զնգվ. 2/102 հասցեում ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 321 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ ծխախոտային արտադրատեսակների թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9584

«17» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈՅԻ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՅՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 110-Ն որոշումները և անհատ ձեռնարկատեր «ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈՅԻ»-ի հայտը (մուտք՝ 2025 թվականի սեպտեմբեր 12-ի N 6007).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անհատ ձեռնարկատեր «ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈՅԻ»-ին տալ 2025 թվականի սեպտեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զնգվ. 2/102 հասցեում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 322 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 959-Լ

«17» սեպտեմբերի 2025թ.Ք. Էջմիածին

ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, համայնքում շրջայցերի ժամանակ Արցախյան և 44-օրյա պատերազմներում զոհվածների հուշարձաններին ծաղիկներ խոնարհելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2025թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 18.0 հազ. դրամ փոխանցել ԱՁ Մանուկ Անդրեասյանին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 960Ա

17 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12.09.2025Թ. ԹԻՎ 937Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 12.09.2025թ. «Հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 937Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ հիմնական և եզրափակիչ մասերում նշված «0.0047հա» բառի փոխարեն կարդալ «0.00576հա» բառը.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 961Ա

18 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա. Բաբաջանյան փողոցի թիվ 27 տան բնակիչ Ալվարդ Սերյոժայի Սարգսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա. Բաբաջանյան /նախկին Զվարթնոց թաղամաս Մ. Մաշտոց/ փողոցի թիվ 27 և 27ա հասցեներում գտնվող անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 29092017-04-0025 տրված՝ 29.11.2017թ, սեփականության իրավունքի վկայական թիվ 2097035 տրված՝ 25.10.2005թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011EVMGJUC/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ա. Բաբաջանյան փողոց, թիվ 27 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛЬНОЕ СООБЩЕСТВО ВАГАРШАПАТСКОЕ ГОРОДСКОЕ ПРАВИТЕЛЬСТВО
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9624

18 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Գևորգ Երվանդի Բաղումյանի լիազորված անձ Ալեն Արթուրի Ստեփանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Խ. Կարճիկյան փողոցի թիվ 9 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2628699 տրված՝ 11.08.2005թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011GLQ6UHG/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Խ. Կարճիկյան փողոց, թիվ 9/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԱՏՈՒՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ ВАГАРШАПАТСКОЕ СООБЩЕСТВО
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 963Կ

18 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱԼԻՍԱ ՀԱՅԿԱԶԻ ՋԻՆԻՍՅԱՆԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ ՄԵԼՍԻԿԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ֆրանց Վերֆելի փողոցի թիվ 19ա տան բնակիչ Ալիսա Հայկազի Ջինիսյանի դիմումը՝ պարզվել է, որ.

- համաձայն «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 08.04.2025թ. հաստատված 1618 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 14.07.2025թ. հաստատված 5675, 5676 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 10.07.2025թ. կազմված հատակագծի՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ղ. Աղայան փողոցի թիվ 21 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Ալիսա Հայկազի Ջինիսյանին և Գևորգ Մելսիկի Մալխասյանին.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.1173 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և օժանդակ շինություններ,
-բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0051հա սահմանազատված հողամաս,
-բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված

անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ղ. Աղայան փողոցի թիվ 21 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.0051 հա մակերեսով հողամասը համարել Ալիսա Հայկազի Ջինիսյան /ծնված՝ 10.01.1959թ. և Գևորգ Մելսիկի Մալխասյանի /ծնված՝ 26.06.1981թ./ սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 964/Ա

18 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵԼԻԽԱՆ ՀԱՅԿԻ ԿՐՄԱՋՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մայիսյան փողոցի թիվ 34 տան բնակիչ Վելիխան Հայկի Կրմաջյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 04.07.2025թ. հաստատված թիվ 5312, 5313 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր և «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 14.08.2025թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մայիսյան փողոցի թիվ 34 հասցեում գտնվող 0.092հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մայիսյան փողոցի թիվ 34 հասցեում գտնվող 0.092հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները համարել Վելիխան Հայկի Կրմաջյանի /ծնված՝ 02.01.956թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 965Ա

18 սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 09.09.2025թ. թիվ 105-Ա որոշումը, ՀՀ վարչապետի 22.12.2009թ. թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 03.06.2025թ. տրված թիվ 2/փ-158 եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 04-002-0601-0077 կադաստրային ծածկագրով 0.0736հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը, որից 0.03813հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության և 0.03547հա ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասեր փոփոխել հատուկ պահպանվող նպատակային նշանակության պատմական և մշակութային գործառնական նշանակության հողամասի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ՄԵԼՍԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 966Ա

18 մայիսի 2025թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.05.2025Թ. ԹԻՎ 435Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 06.05.2025թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները Գայանե Էդուարդի Մարտիրոսյանի սեփականությունը համարելու մասին» թիվ 435Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ հիմնական և եզրափակիչ մասերում նշված «0.03669հա» բառի փոխարեն կարդալ «0.03645հա» բառը.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 967Ա

18 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Խ. Աբովյան փողոցի թիվ 42 տան բնակիչ Արմեն Վոլոդյայի Պուլուզյանի դիմումը իրեն, Սոֆիկ Եղիշի Խաչատրյանին և Կարմեն Վոլոդյայի Պուլուզյանին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 13092025-04-0006 տրված՝ 22.11.2006թ., «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 13.08.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011WPRH26V, 04001AZVM6UL/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Խ. Աբովյան փողոցի թիվ 42 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Խ. Աբովյան փողոց, թիվ 42 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Խ. Աբովյան փողոց, թիվ 42/3 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭР ВАГАРШАПАТСКОЙ ОБЩИНЫ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 968 Ա

18 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Ալեքսան Վարազդատի Գևորգյանի լիազորված անձ Արմեն Սեյրանի Գևորգյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-0641-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 21.08.2025թ. տրված՝ թիվ Ամ-1267 արխիվային քաղվածք և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011JARLDZV/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 227 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 969-Լ

«19» սեպտեմբերի 2025թ.Ք. Էջմիածին

ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 24-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով կրթության և մշակույթի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանի զեկուցագիրը, ՀՀ Անկախության տոնի շրջանակներում՝ «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ում «Հաղթանակի Գենեզիս» ներկայացման ցուցադրության նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2025թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 400.0 հազ. դրամ փոխանցել «Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոն» ՊՈԱԿ-ին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9704

19 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 111դ տան բնակիչ Սոկրատ Համազարի Կարախանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան /նախկին Հոկտեմբեր/ փողոցի թիվ 111 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ 29.06.1987թ. տրված տեխնիկական անձնագիր, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 08.08.2025թ. հաստատված 7127 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011KZCMC6N/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոց, թիվ 111/5 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ, АРМАВИРСКИЙ МАРЗ ВАГАРШАПАТСКОЕ ТЕРРИТОРИАЛЬНОЕ УПРАВЛЕНИЕ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 974Ա

19 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Արթուր Գագիկի Բաբայանի լիազորված անձ Արման Գագիկի Բաբայանի դիմումը Արթուր Գագիկի Բաբայանին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 13042022-04-0040 տրված՝ 13.04.2022թ., «Աիդա Բաղրամյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0393/ կողմից 08.09.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011TT8KYMR, 04011PHBAWJK/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի 1-ին թաղամասի թիվ 981 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 981 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 981/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 979Ա

19 սեպտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի թաղամասի թիվ 461 տան բնակիչ Սվետլանա Արսենի Մելքոնյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 28032012-04-0047 տրված՝ 28.03.2012թ., «Աիդա Բաղրամյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 06.09.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011BJWX6L9, 04011T3HYZMX/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի թաղամասի թիվ 461 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 461 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 461/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ ВАГАРШАПАТСКОЕ СООБЩЕСТВО
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9734

19 սեպտեմբերի 2025թ. **ք.Էջմիածին**

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2 ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 5/1 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, քննելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոց փողոցի թիվ 2 փակուղի, թիվ 5/1 հասցեին կից համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության ինքնակամ կառուցված գրասենյակային տարածքը և ավտոտնակը քանդելու և հողամասն ազատելու վերաբերյալ հարցը, պարզեց որ.

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի «ա» կետի՝ Վաղարշապատ համայնքի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժինը հիմք ընդունելով 22.08.2025 թվականի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի թիվ 5.5-1176 գրությունը կատարել է գրությամբ նշված տարածքի տեղազննություն:

Վաղարշապատի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 15.09.2025թ-ի տեղազննության արձանագրության համաձայն Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոց փողոցի, թիվ 2 փակուղի, թիվ 5/1 հասցեին կից, համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության ինքնակամ կառուցվել է գրասենյակային տարածք և ավտոտնակ:

Հիմք ընդունելով վերոգրյալը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների հիմքով Վաղարշապատի համայնքապետարանում 15.09.2025 թվականին հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի ընթացքում լսումներ չեն անցկացվել՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգավորումները:

<u>Գործի համար նշանակություն ունեցող փաստերը.</u>

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում՝ ձեռքբերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոց փողոցի թիվ 2 փակուղի, թիվ 5/1 հասցեին կից, համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության կառուցվել են ինքնակամ կառույցներ՝ գրասենյակային տարածք և ավտոտնակ, իսկ դրանցով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այլ անձի գրանցված որևէ իրավունք:

2. Վերոնշյալ ինքնակամ շինություններով ծանրաբեռնված է Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը, ուստի անհրաժեշտություն է առաջացել ազատել հիշյալ հողամասը՝ դրանով ծանրաբեռնված ինքնակամ կառուցված կառույցներից:

3. Առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացված վերը նշված հասցեին կից կառույցները կառուցվել են ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական

բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» 298-րդ, 541-րդ, 542-րդ և 544-րդ կետերի և ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» 150-րդ, 151-րդ և 152-րդ կետերի պահանջների Հայաստանի Հանրապետության շինարարական մի շարք նորմերի խախտումներով:

4. Նշված ինքնակամ կառույցները փաստացի կառուցվել են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 16.06.2024 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 16062024-04-0105/ գույքին կից և խոչընդոտում են սեփականատիրոջ մուտքը և ելքը դեպի իր գույք:

5. Վաղարշապատի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 15.09.2025 թվականին կազմված տեղազննությունը:

6. 15.09.2025 թվականին կատարված տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

7. Հողամասի իրավիճակային հատակագիծը:

8. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի թիվ 5.5-1176 գրությունը և կից ներկայացված Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի 20.11.2024 թվականի թիվ 32542407 փորձագիտական եզրակացությունը:

Այսպես, հիմք ընդունելով վերոգրյալը կարելի է ապացուցված համարել, որ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոց փողոցի թիվ 2 փակուղի, թիվ 5/1 հասցեին կից, համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության, կառուցվել են ինքնակամ կառույցներ՝ գրասենյակային տարածք և ավտոտնակ:

Ավելին, նշված ինքնակամ կառույցները խորչընդոտում են Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոց փողոցի թիվ 2 փակուղի, թիվ 5/1 հասցեում գտնվող «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գույք մուտք և ելք գործելուն, կառուցված են ՀՀՇՆ 30-01-2023 298-րդ, 541-րդ, 542-րդ և 544-րդ կետերի և ՀՀՇՆ 21-01-2014 150-րդ, 151-րդ և 152-րդ կետերի պահանջների խախտմամբ: Ինքնակամ կառույցների և Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոց փողոցի թիվ 2 փակուղի, թիվ 5/1 հասցեում գտնվող գույքի միջև առկա է 1,5-2,0մ հեռավորություն ինչը չի համապատասխանում ՀՀՇՆ 30-01-2023 298-րդ կետով սահմանված նվազագույն՝ 4,5 մ լայնությամբ տրասպորտային անցակետին:

Այսպիսով, ակնհայտ է, որ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոց փողոցի թիվ 2 փակուղի, թիվ 5/1 հասցեին կից կառուցված ինքնակամ շինությունները կառուցվել են առանց հողօգտագործման իրավունքի և համապատասխան շինարարական թույլտվության, խոչընդոտում են սեփականատերերի մուտքը և ելքը դեպի իրենց սեփականության իրավունքով պատկանող գույք, իսկ միայն այն փաստը, որ նշված կառույցները կառուցված են համայնքային սեփականությունը հանդիսացող այդ նպատակի համար չհատկացված հողամասում, առանց համապատասխան թույլտվության և քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, օրենքի ուժով իրավունք է տալիս դրանց քանդման /ապամոնտաժման/ մասին ակտ կայացնելու համար:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմքերը և հիմնավորումները.</u>

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը.

Հայաստանի Հանրապետության կառավարության 14 հուլիսի 2005 թվականի թիվ 1109-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը /անշարժ գույքը/ փոխանցվել է համայնքին և հանդիսանում է համայնքային սեփականություն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի համաձայն՝ համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք: Համայնքի տարածքում գտնվող հողը, բացառությամբ պետությանը, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի,

համայնքի սեփականությունն է: Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք /յուրաքանչյուր ոք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:/:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ինքնակամ զբաղեցված հողամասերը վերադարձվում են դրանց սեփականատերերին, օգտագործողներին՝ առանց հողային օրենսդրություն խախտողների կողմից այդ հողամասերի ապօրինի օգտագործման ժամանակահատվածում կատարված ծախսերի հատուցման:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը:

Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները:

Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Ինքնակամ կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

ա) որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

գ) օրենքով նախատեսված ժամկետներում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով չեն հաշվառվել:

Նույն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասի՝ լսումներ չեն անցկացվում կամ կարող են չանցկացվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասի, 188-րդ հոդվածի 1-3 մասերի, 274-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի, 116-րդ հոդվածի 2-րդ մասի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 9-րդ հոդվածի 2-րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 36-րդ, 38-րդ, 53-րդ, 58-60-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման պահանջները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Չօրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոց փողոցի թիվ 2 փակուղի, թիվ 5/1 հասցեին կից համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում, առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության կառուցված ինքնակամ շինությունները՝ գրասենյակային տարածքը և ավտոտնակը:

2. Քանդել /ապամոնտաժել/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոց փողոցի թիվ 2 փակուղի, թիվ 5/1 հասցեին կից համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում, առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության կառուցված ինքնակամ շինությունները՝ գրասենյակային տարածքը և ավտոտնակը և ազատել հողամասը:

3. Հանձնարարել Վաղարշապատի համայնքապետարանի «Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկին՝ աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի աշխատակիցների օժանդակությամբ իրականացնելու սույն որոշման 2-րդ կետով սահմանված քանդման /ապամոնտաժման/ աշխատանքները:

4. Առաջարկել ՀՀ ոստիկանության ՀՈԳՎ Վաղարշապատի բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատի համայնքապետարանի կողմից քանդման /ապամոնտաժման/ աշխատանքները կատարելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ Միեր Մկրտչյանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

7. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վաղարշապատ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

8. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ որոշման դեմ վարչական բողոք բերելը չի կասեցնում դրա կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**